

Այսպիսով, պարզվում է, որ միջնադարյան հայ եկեղեցական տերմինաբանության մեջ արեւմտյան եւրոպական եկեղեցական feod-ին համապատասխանել է միջնադարյան հայերենում «ժառանգութիւն» տերմինը, իսկ beneficium-ին «շնորհ» տերմինը:

Մ. Ավգալբեգլան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ

(Ներսես Լամբրոնացու թարգմանած Գրիգոր պապի պատմությունը)

«Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից» ժողովածուում, ի թիվս այլ նյութերի, տպագրված է նաև Հուդա Իսկարիովտացու մասին պարականոն գրույցին խիստ առնչվող մի վարք՝ «Յիշատակ վարուց սքանչելի առն աստուծոյ սրբոյն Գրիգորի Հռոմայ պապուն»:

Այդ վարքը, ինչպես նաև Հուդայի շուրջ հյուսված գրույցը շատ գծերով հիշեցնում է առասպելական Էդիպ արքայի պատմությունը. երկուսն էլ հեթանոսական լեգենդի քրիստոնեական գերապրուկի հետաքրքրական նմուշներից են: Ժանրային հատկանիշներով միանգամայն տարբեր լինելով,— գրված է վարքի ծանոթագրության մեջ,— այս գրույցը սյուժետային մեծ ընդհանրություն ունի վերը բերած Հուդայի պարականոնի հետ: Հին հունական առասպելում պատմվող Էդիպի կյանքի մանրամասները, որ էպիղոգիկ անցել են բիրլիական Հուդային, սրանից էլ փոխանցվել են պատմական անձնավորություններին, եկեղեցու հայրերին, մինչև իսկ «անքննադատելի և անսխալական» Հռոմի պապին: Այս գրույցում Գրիգոր պապն է ենթարկված Էդիպի ճակատագրին, միայն մի տարբերություն՝ այստեղ ոչ թե ճակատագրից, այլ աշխարհիկ կյանքից ու մեղքերից խուսափող և փախչող Գրիգորը ինքն է դառնում աշխարհիկ ամենամեղսական արարքների մասնակից ու հերոս, բայց, վերջում, ինչպես հատուկ է քրիստոնեական գրականությանը, մեծ ապաշխարություն մաքրագործվում է և սրբի պսակով զարդարվում²:

Այս հետաքրքրական վարքը թարգմանական է: Ինչպես նշում է պրոֆ. Կ. Մելիք-Օհանջանյանը ժողովածուի առաջաբանում, այն թարգմանված է լատինական հանրահայտ «Gesta romanorum» ժողովածուից, «ամենայն հավանականությամբ XII դ. Կիլիկիայում, երբ հայ և կաթոլիկ եկեղեցիների միջև բանակցություններ էին վարվում և երբ Ռուբինյան հայկական պետության մեջ կաթոլիկների համար նպաստավոր պրոպագանդա էր մղվում»³: Միանգամայն հավանական այս ենթադրությանը հաջորդում է Կիրակոս Դանձակեցու Պատմության վրա հիմնված որոշակի եզրակացությունն այն մասին, թե այս վարքի թարգմանիչն է Ներսես Լամբրոնացին: «Ինչպես վկայում են

¹ «Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից» Խրագրությամբ և առաջարկով Կ. Մելիք-Օհանջանյանի, Ժողովածուի նյութերն բնութեցին, տեքստը պատրաստեցին և ծանոթագրեցին Ավգալբեգլան Մ., Մկրտչյան Մ. և Սրայյան Ա., Երևան, 1937:

² Նույն տեղում, էջ 263:

³ Նույն տեղում, Առաջաբան, էջ XXVI:

աղբյուրները, մասնավորապես Կիրակոս Գանձակեցին,—ղրված է առաջարանում,— Ներսես Լամբրոնացին է, որ թարգմանեաց... և զպատմութիւն Գրիգորի պապուն Հոռմայ:

Իրոք, Կիրակոս Գանձակեցին, թվարկելով Գրիգոր Փոքր Վկայասեր կաթողիկոսի ժամանակաշրջանի իրադրություններն ու գործերը, նշում է, որ «Յաւուրս սորա էին վարդապետք անուանիք և իմաստունք՝ Ներսէս սօւմս-չելի, հարազատ նորուն կաթողիկոսի, և միւս Ներսէս եպիսկոպոս Լամբրոնիցի, եղբար շեթմոյ, որ թարգմանեաց զմեկնութիւն տեսական Յոհաննու, և զպատմութիւնն Գրիգորի Պապոյն Հոռմայ, և զօրինադրութիւն Բենետիկտոսի...» և այլն¹:

Այս միեւնունը հաստատում է նաև Ներսես Լամբրոնացու կենսագիրը. «Եւ յորժամ ձեռնադրեցաւ [Ներսէս] արքեպիսկոպոս Տարսոնի, թարգմանեաց յունաց ի հալ գիր զպատմութիւն սրբոյն Գրիգորի պապուն Հոռմայ և զկանոնական զիրս սուրբ հաւրն Բենեքտիոսի...» և այլն²:

Թվում է, թե ամեն ինչ պարզ է և անվիճելի:

Սակայն, մատենագրական և ձեռագրական այլ աղբյուրներ դալիս են ներքևու Կիրակոս Գանձակեցու բերած վկայությունը, ավելի ճիշտ՝ ապացուցելու, որ ինչպես Կիրակոս Գանձակեցու, նույնպես և կենսագրի հիշատակած «Պատմութիւն Գրիգորի պապոյն Հոռմայ» երկը «էջեր միջնադարյան գեղարվեստական արձակից» ժողովածուում տպագրված Գրիգոր պապի վարքը չէ, այլ բոլորովին մի այլ աշխատություն:

Իմենք աղբյուրներին:

Գ. Զարբհանալլան իր «Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց աշխատության մեջ բերում է Ներսես Լամբրոնացու թարգմանությունների ցանկն ու մեկ առ մեկ՝ այն աղբյուրները, որոնք իրեն հիմք են տվել տվյալ երկը այսինչ կամ այնինչ հեղինակի թարգմանություն հայտարարելու համար. այս առիթով բերված է ներսես Լամբրոնացու հիշատակարաններից մեկը, որից բերում ենք մեզ հետաքրքրող հատվածը միայն. «...իսկ ապա ի հուսկ յետին ժամանակս ըստ թուոյ Հայոց վեցհարիւր և քսան և ութ [1179] յամի՝ իմոյ Ներսէսի Տարսոնի եպիսկոպոսի ի մանկական հասակ ուսումնասիրութեան և բարեկարգութեան տնայնաւք շրջելով ի վանորայս... հիանալի ի տեսանելն զառաքինազարդ միայնութիւն և զճգնութիւն Հոռմայեցի միաբանակեաց վանորէից. որ այժմ կոչին փոանգք: Եւ իբրեւ ընդ անընթեկ (Sic) իրս սխրացեալ՝ հարցր ընդ ոմն իմաստուն կրանաւոր որ ի Յունաց Բասիլ անուն. Ուստի՝ սոցա այսքան ուղղութեան կարգացս շնորհ, որով գերազանց գտանին այսաւր ձեզ և մեզ: Պատասխանեաց՝ ի Բենեդիքտոսէ երանեալ հաւրէն, զորոյ զվարսն պատմի սուրբն Գրիգոր պապըն: Եւ ունի՞ս արդեւք զնոյն գիրս՝ ասացի: Պատասխանեաց Այո՛ւ: Եւ երբ առաջի իմ. և իմ փոքր մի վարժ դուրով հելլենացի գրոյն՝ ընթերցալ աստ անդ. և բորբոքեցաւ լիս ցանկութիւն աստուածային գրոցս թարգմանութեան: Այլ զի ոչ կամի անձամբ վճարել զգործն՝ խափանեցաւ յայնժամ. և թարգմանեցի զնորին Բենեդիքտոսի կարգ և զաւրէնս կրանաւորաց նոյնժամայն ի լատին լեզուէն ի փոանգ վանս սուրբ Պաւղոսի որ ի

¹ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1910, էջ 102—103:

² Պետ. Մատենադարան, ձեռ. № 2711, էջ 471ա:

քաղաքն Անտիոք՝ ի ձեռն հասակակից կրաւնաւոր միոյ ի նոցանէ Կիւամ անուն: Իսկ ապա եկեալ ի վանսն որ Սիմանակլա կոչի հուպ Անարզաթոյ, յորում բազում գրեանք ի յունական գիրս աւանդեալ է, մանրամասնաբար խուզեալ գաի վայս գիրսս, և հրճուեալ ի վերայ այնչափ խնդութեամբ, որպէս գիտեն փորձքն ուսումնասիրութեան, որ է նոյն և աստուածսիրութիւն. առեալ գնացի ի հայրապետական աթոռն՝ որ կոչի Հոռմկլայ յափն Եփրատայ, և կամաւք տեսաւ իմոյ կաթուղիկոսին Գրիգորոյ թարգմանեցի զսա և զմկնութիւն Յայտնութեանն Յոհաննու...

Ներսէս Լամբրոնացու այս հիշատակարանից հետո, Գ. Զարբհանլյանն բերում է նաև Ներսէսի թարգմանած Գրիգորի պատմության գլուխների վերնագրերը միայն, որ հետևյալներն են.

«Գրիգորի սրբազան պապուն Հոռվմայ առ Պետրոս նախասարկաւագ նորին եկեղեցւոյ: Գիրք առաջին»:

«Սրբազան հայրապետին Հոռմայ Գրիգորի առ Պետրոս նախասարկաւագ պատասխանի վասն քաղաքավարութեան հաւրն Բենեդիկտոսի: Գիրք երկրորդ»:

«Նորին սրբազան հայրապետին Գրիգորի առ Պետրոս նախասարկաւագ: Գիրք երրորդ»:

«Սրբազան հայրապետին Հոռվմայ Գրիգորի ասացեալ՝ վասն զի ճշմարիտ է հոգևորն, քան զմարմնաւորն: Գիրք չորրորդ»¹:

Ինչպիս պարզ է դառնում, Գրիգոր պապի անունը պարունակող այս աշխատության բովանդակութիւնը շատ հեռու է վարք լինելուց և երկրորդ՝ այստեղ Գրիգորը հերոս չէ:

Այնուհետև: Հ. Տաշյանն իր «Յուլցակում» հիշատակում է ձեռագրերում պահպանված դարձյալ Ներսէս Լամբրոնացու նույն թարգմանութիւնն ու բերում թարգմանվող աշխատության վերնագիրն ու համառոտ նկարագիրը. «Սրբազան հայրապետին Հոռմայ Գրիգորի ասացեալ վասն զի ճշմարիտ է հոգևորն, քան զմարմնաւորն, թարգմանեցեալ ի Ներսիսէ Լամբրոնացոյ լեպիսկոպոսէ Տարսոնի Կիլիկեցւոյ»: Այնուհետև Հ. Տաշյանը նկարագրում է՝ «Տրամախօսութեան ձևով է մեծագոյն մասը. խօսող անձինք են Գրիգոր հայրապետ և Պետրոս նախասարկաւագ»:

Հ. Տաշյանի «Յուլցակից» իմանում ենք, որ Ներսէս Լամբրոնացու թարգմանութիւնը Գրիգոր հայրապետի գրած «Գրիգորի ասացեալ» աշխատութիւնն է, և որ այն բովանդակութեամբ վարք չէ, այլ տրամախօսութիւն (դիալոգ) Գրիգորի և նախասարկաւագ Պետրոսի միջև:

Եվ վերջապես մի այլ ձեռագրից² Հ. Տաշյանը բերում է հետևյալ հատվածը. «Սա (Ներսէս) ծնանի ՈԲ (= 1153) թուականիս հայոց: Եւ վեշտասան ամի հասակի իւրոյ ձեռնադրի կրօնաւոր քահանայ ի Ներսիսէ կաթուղիկոսէ... և ի թուին ՈԻԶ (= 1177)... զգենու զգեստ ժառանգաւորութեան. արքեպիսկոպոս Տարսոնի և շրջակայ գաւառացն: Թարգմանեաց ի Յուլցա զՊատմու-

¹ Գ. Զարբհանլյան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վեներտիկ, 1889, էջ 358—361:

² Հ. Տաշյան, Յուլցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի վիեննա, 1893, էջ 185—186:

³ Նույն տեղում, էջ 638:

թիւն սրբոյն Գրիգորի պապոյն, որ Դիալոկոս կոչի և զկանոնական գիրս սրբոյ հօրն Բենեդիկտոսի...»:

Այս վերջին հիշատակարանը միանգամայն պարզում է, նախ՝ որ ներսես Լամբրոնացու թարգմանութիւնը Գրիգոր պապի մասին չէ, այլ Գրիգոր պապի գրածը՝ «ասացեալ» և երկրորդ այն վարք չէ, այլ Գրիգորի տրամախոսութիւնը Պետրոս նախասարկավագի հետ:

Այստեղից պարզ է դառնում, որ ինչպես կենսագրի, այդպես և Կիրակոս Գանձակեցու հիշատակած «թարգմանեաց... զպատմութիւն Գրիգորի» ոչ թե պետք է հասկանալ, թե ներսես Լամբրոնացին թարգմանել է պատմութիւն Գրիգորի մասին, մեր տպագրած վարքը, այլ Գրիգոր I Հռոմի պապի (540—604) գրած աշխատութիւնը,¹ որ հայերէնում «Բանք պատմողականք» կամ «Տրամախոսութիւնք» և կամ «Դիալոկոս» անունով է հայտնի:

Այսպիսով. «Էջեր հալ միջնագարլան զեղարվեստական արձակից» ժողովածուում տպագրված «Յիշատակ վարուց սքանչելի առն աստուծոյ Գրիգորի Հռոմայ պապուն» առասպելախառն պատմութիւնը ոչ մի կապ չունի Կիրակոս Գանձակեցու հիշատակած «Պատմութիւն Գրիգորի Հռոմայ պապուն» աշխատութիւն հետ և նրա քարգմանիչը ներսես Լամբրոնացին չէ: Գրիգոր պապի վարքի թարգմանութիւն ժամանակի, ինչպես նաև թարգմանչի հարցը դարձյալ մնում է անհայտ ու անորոշ, քանի որ ներսես Լամբրոնացու թարգմանութիւն մասին հիշատակութիւնները վերաբերում են միանգամայն այլ աշխատութիւն, որ ոչ մի չափով չի առնչվում ժողովածուում բերված զրույցի հետ:

¹ Աշխատութեան լրիվ վերնագիրն է «Գրիգորի սրբազան պապու երիցուն Հռոմայ Բանք պատմողականք առ Պետրոս նախասարկաւագ իւր վասն բաղաժարութեան զանազան հարցն, որք յիտալիա փայլեցին. ի չորս գիրս» (տե՛ս Գ. Սարգսեան, Մատենադարան հայկական թարգմանութեանց):